6988

3 кп 2
Z - 22

# ՀամԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ III ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7—10 մարտի 1936 թ.

329.15(47)
Հ-21

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ ● 1936

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք*

17.09.2013

6988

ՅԿՈՂ
Հ-2,2
պր.

1 DEC 2009
23 SEP 2006

# ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ III ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1529
37

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1936

**ПОСТАНОВЛЕНИЯ III ПЛЕНУМА КОМИССИИ ПАРТИЙНОГО КОНТРОЛЯ ПРИ ЦК ВКП(б)**

Армпартиздат, Эривань

## ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1936 թվի մարտի 7—10-ը տեղի ունեցավ ՀամԿ(բ)Կ կենտկոմին կից Կուսակցական վերահսկողության Հանձնաժողովի յերրորդ պլենումը։

Պլենումը քննարկեց հետևյալ հարցերը·

1· Կուսակցական վերահսկողության Հանձնաժողովի լիազորների աշխատանքի մասին։

2· Կուսակցական վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաների աշխատանքի և ՀամԿ(բ)Կ անդամներին ու թեկ-

նածուներին կուսակցական տույժի յենթարկելու կարգի մասին:

Կուսակցական վերահսկողության Հանձնաժողովի պլենումի բանաձևերը հաստատված են ՀամԿ(բ)Կ կենտկոմի կողմից և բերվում են ստորև:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՄԿ(բ)Կ
ԿԵՆՏԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀամԿ(բ)Կ ԿԿ կից Կուսակցական վերահսկողության Հանձնաժողովի III պլենումի վորոշումը

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի պլենումը նշում է, որ Համ. Կ(բ)Կ XVII համագումարի որոշմամբ ստեղծված Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի՝ տեղական կուսակցական կազմակերպություններից անկախ՝ լիազորների ինստիտուտը լիովին արդարացրեց իր կոչումը և դրական դեր խաղաց կուսակցության համագումարների ու Համ. Կ(բ)Կ Կենտկոմի որոշումների կատարման ստուգման ամբողջ դրվածքը բարելավելու գործում և դրանով իսկ նպաստեց մարզկոմների, երկրկոմների, ազգային կոմկուսակցությունների կենտկոմների և տեղական խորհրդային ու տնտեսական մարմինների

աշխատանքում կազմակերպական-գործնական ղեկավարության փորձի բարձրացմանը:

Իրագործելով սիստեմատիկ վերահսկողություն կուսակցության դիրեկտիվների կատարման նկատմամբ, Կուսակցական վերահսկողության Հանձնաժողովի լիազորները մի շարք կուսակցական կազմակերպությունների աշխատանքում խոշորագույն թերություններ յերևան բերին և դրանց մասին ժամանակին ահազանգեցին Համ. Կ(բ)Կ Կենտկոմին (Սարատովի յերկրկոմի սխալների մասին, Նովոչերկասկի քաղխորհրդի աշխատանքում յեղած խեղաթյուրումների մասին՝ ուսուցիչների աշխատավարձը ժամանակին չվճարելու գործում և այլն):

Դրա հետ միասին, տեղական կուսակցական կազմակերպությունները, հենվելով Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների աշխատանքի վրա և օգտագործելով նրանց ստուգման նյութերը, դյուրորեն ավելի հաջողությամբ ու



ժամանակին կարողացան վերացնել լիազորների կողմից կուսակցական, խորհրդային ու տնտեսական մարմինների աշխատանքում յերևան բերված խոշորագույն թերությունները, դրանով իսկ ապահովելով Համ.Կ(բ)Կ Կենտկոմի կարևորագույն վորոշումների լավագույն ու արագ կատարումը:

Այս բոլորը միասին մարզերում և հանրապետություններում բարձրացրին կուսակցական, խորհրդային ու տնտեսական կազմակերպությունների ղեկավարների պահանջկոտությունը՝ իրենց աշխատանքի և իրենց սեփական վորոշումների կատարման նկատմամբ:

Սակայն, չնայած այդ դրական արդյունքներին, Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների աշխատանքը մի շարք էական թերություններ ունի, վորոնք առավել ևս անհանդուրժելի յեն, վորովհետև կուսակցությունն ամբողջ ժամանակ բարձրացնում է պահանջկոտու-

թյունը կատարման սիստեմատիկ վերահսկողության նկատմամբ:

Լիազորների աշխատանքի թերությունն այն է, վոր նրանք իրենց աշխատանքի մեջ դեռ չեն կարողացել գլխավորը տարբերել յերկրորդականից, իրենց ուշադրությունը չեն կենտրոնացնում վճռական հարցերի ստուգման վրա և հաճախ զբաղվում են մանր խնդիրներով: Փոխանակ սիստեմատիկ վերահսկողության տակ առնելու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի յուրաքանչյուր կարևորագույն վորոշումը՝ նրա հրապարակումից անմիջապես հետո, լիազորները կազմում են իրենց սեփական (հաճախ վերացական) պլանները, վորոնք պարունակում են ակտուալ նշանակություն չունեցող հարցեր, և իրենց վրա չեն վերցնում այնպիսի գործերի քննարկումը, վորոնք հաջողությամբ կարող են լուծվել տեղական կազմակերպությունների միջոցով:

Պլենումը Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների աշխատանքի թերությունը համարում է այն, վոր



նրանք հաճախ կատարման ստուգումից շեղվում են տեսչություն անելու ճանապարհը: Դրա հետևանքով լիազորներից վոմանք յերկար և համայնապարփակ, վոչ վոքի վոչնչով չպարտավորեցնող և ինքնըստինքյան կատարման ստուգման հատուկ կազմակերպում պահանջող վորոշումներ են կայացնում: Այդպիսի ընդհանուր վորոշումները, այնքան, վորքան դրանք չեն յելնում Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորևէ կոնկրետ վորոշման ստուգումից և նկատի չունեն այդ վորոշման կատարման համար պատասխանատու կոնկրետ կազմակերպություններ ու կոնկրետ անձանց, կարող են միայն որինականացնել կատարման ձըգձգումը և փաստորեն լիազորի վորոշման հետևը թաղնվելու հնարավորություն են տալիս հենց նրանց, ովքեր չարամտորեն սաբոտաժի յեն յենթարկում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվները:

Պլենումը Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների աշխատանքի թերությունն է համարում այն, վոր

նրանք համարյա չեն զբաղվել կուսակցական շինարարության հարցերի վերաբերյալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումների կատարման ստուգմամբ: Լիազորներից ոմանք սխալ են հասկանում իրենց պարտականությունները, կարծելով, թե կուսակցական շինարարության հարցերի վերաբերյալ Կենտկոմի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն պետք է ունենան միայն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի համապատասխան բաժինները:

Պլենումը տեղերում Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորի աշխատանքի թերություն է համարում նաև՝ դեռևս թույլ կապը արհմիությունների, խորհուրդների, մամուլի, կոմյերիտմիության և նրա «Թեթև հեծելազորի» վերահսկչական աշխատանքի հետ: Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորներից ոմանք չեն հասկացել, որ իրենց վերահսկչական աշխատանքի ընթացքում, հենվելով այդ կազմակերպությունների վրա, նրանք կկարողանային ա-



վելի զգալի արդյունքների հասնել և իրենց ապարատը չէին ծանրաբեռնի մի շարք մանր հարցերով:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների աշխատանքում գոյություն ունեցող մատնանշված թերությունները ամենաարագ կերպով վերացնելու և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշումների կատարման վերահսկողության դրվածքի ամբողջ գործը բարելավելու նպատակով Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի պլենումը որոշում է.

1. Գտնելով, որ Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների ինստիտուտը լիովին արդարացրեց իրեն և նպաստում է կուսակցության համագումարների ու ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումների կատարումն ստուգելու գործի դրվածքի բարելավմանը, ավելացնել լիազորների թիվը այն հաշվով, որ ընդգրկվեն բոլոր մարզերը, յերկրամասերն ու հանրապետությունները:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լրացուցիչ լիազորներ նշանակել առաջին հերթին Իվանովի, Չելյաբինսկի ու Խարկովի մարզերում, Հեռավոր-Արևելյան, Արևելյան-Սիբիրի, Կրասնոյարսկի, Հյուսիսային ու Կույբիշևի յերկրամասերում, Բելառուսական ՍՍՀ-ում, Թաթարստանի ու Չուվաշական ԻՍՍՀ-ներում:

2. Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի պլենումը Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյին պարտավորեցնում է Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի տեղական լիազորների և կենտրոնական ապարատներում յեղած Կուսվերահսկողության Հանձնաժողովի խմբակների աշխատանքի ղեկավարման գործում այնպիսի դրություն ստեղծել, վոր Կուսակցական Վերահսկողությունը տեղյակ լինի և ցանկացած րոպեյին կարողանա ՀամԿ(բ)Կ Կենտկոմին հաղորդել, թե ժողկոմատները, կենտրոնական հիմնարկներն ու տեղական



կազմակերպությունները ինչպես են կատարում նրա դիրեկտիվները:

Դրա համապատասխան՝ պլենումը Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովին պարտավորեցնում է կատարել հետևյալ ձեռնարկումները.

ա) ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումների կատարումն ստուգելու ամբողջ աշխատանքն այնպես կազմակերպել, վոր յուրաքանչյուր կարևորագույն վորոշում ընդունվելուց անմիջապես հետո սիստեմատիկ վերահսկողության տակ առնվի: Անհրաժեշտ է Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի խմբակների և տեղական լիազորների աշխատանքի պրակտիկայից վերացնել դրություն ունեցող այն փաստերը, յերբ Կենտկոմի ու ՍՍՀՄ Ժողկոմխորհի այս կամ այն վորոշման կատարումն ստուգվում է այն բանից հետո, յերբ տվյալ վորոշման կատարման ժամկետները վաղուց արդեն անցել են, իսկ բուն վորոշումը չի կատարվել: Այսպիսի պրակտիկան կորցնում է վերահսկողության նշանակու-

1529/37

թյունը, այն դարձնում է վոչ ներգործուն և ամբողջ ստուգումը հանգեցնում է միայն վորոշումը չկատարողներին տույժի յենթարկելու, մինչդեռ վերահսկողության հիմնական նպատակը — վորոշումների ժամանակին կատարումն ապահովելը — հետին պլանն է մղվում:

բ) ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի յուրաքանչյուր վորոշման առթիվ, վորը կատարման ստուգման հատուկ կազմակերպում է պահանջում, Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոն հաստատում է այդ վորոշման կատարումը Կուսվերահսկողության Հանձնաժողովի խմբակների ու տեղական լիազորների կողմից ստուգելու կարգն ու պլանը՝ թվելով այն անձանց, վորոնք անձնապես պատասխանատու յեն տվյալ վորոշման կատարումն ստուգելու համար:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի խմբակներին արգելել տեղական լիազորներին ինքնուրույն առաջադրանքներ տալը:



Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի համատեղ կայացրած վորոշումների ստուգման ժամանակ Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի և Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի աշխատանքի մեջ զուգահեռականությունից խուսափելու նպատակով Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյի նշած ստուգման կարգը պետք է համաձայնեցվի Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի հետ այնպես, վոր ճշգրիտ կերպով սահմանված լինի, թե վո՛ր վորոշումն է ստուգվում միայն Կուսակցական Վերահսկողության կողմից, վո՛րը՝ Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի հետ միասին և վո՛րը՝ առանձին:

գ) Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի խմբակներն ու տեղերի լիազորներն առաջադրանք ստանալով Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումն ստուգելու մասին, պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում ճշգրիտ կերպով սահմանեն, թե այն կազմակերպության կամ

հիմնարկության մեջ, որին վերաբերում է Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշումը, ո՛վ է անմիջականորեն պատասխանատու այդ որոշման կատարման համար և սիստեմատիկ վերահսկողություն տանեն, թե այդ անձինք ինչպես են կատարում Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշումը:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշումների կատարման վերահսկողության ուղղությամբ իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի խմբակներն ու լիազորները պետք է այնպիսի դրություն ստեղծեն, որ աշխատողների մեջ ամրանա պետական պատասխանատվություն, կարգապահություն ու ճշտապահության զգացմունքը՝ իրենց հանձնարարված առաջադրանքի կատարման նկատմամբ, դիմելով ոչ միայն պատժիչ միջոցների, այլև խրախուսման միջոցների:

դ) Կուսակցական Վերահսկողության



Հանձնաժողովի խմբակներն ու տեղերի լիազորները պետք է սիստեմատիկաբար (ամիսը 1—2 անգամ) տեղեկագիր ներկայացնեն Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի՝ իրենց վերահսկողությանը հանձնված որոշման կատարման ընթացքի և այն միջոցների մասին, որ ձեռք են առել խմբակները կամ լիազորները տվյալ որոշման ժամանակին կենսագործումն ապահովելու համար:

ե) Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոն սիստեմատիկաբար լսում է Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի խմբակների ու լիազորների հաշվետվություններն այն մասին, թե ինչպես է կատարվում Կենտկոմի ու Ժողկոմխորհի այս կամ այն որոշումը և կանոնավոր կերպով ինֆորմացիա յէ տալիս ՀամԿ(բ)Կ Կենտկոմին այդ որոշումների կատարման ընթացքի մասին:

3. Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների առաջ, որպես

կարևորագույն խնդիրներից մեկը, դնել կուսակցական աշխատանքի հարցերի վերաբերյալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվների կատարման սիստեմատիկ և վոչ թե պատահական ստուգումը: Մոտակա ժամանակաշրջանում Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորները պետք է այս բնագավառում իրենց ուշադրությունը կենտրոնացնեն ստախանովյան շարժման ու կուսակցական փաստաթղթերի ստուգման արդյունքների մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումների և պրոպագանդիստական աշխատանքի և կադրերի դաստիարակման ու աճեցման վերաբերյալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվների կատարման վրա:

Պարտավորեցնել լիազորներին՝ կանոնավոր կերպով ինֆորմացիաներ ներկայացնել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյին՝ այդ վորոշումների կատարման ուղղությամբ մարզկոմների, երկրկոմների և ազգային կոմկուսակցությունների կենտ-



կոմների կողմից կիրառվող ձեռնարկումների մասին:

4. Սխալ համարել այն, յերբ Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորներից վոմանք և առանձնապես նրանց ապարատները չեն համաձայնեցրել իրենց (աշխատանքը տեղական կուսակցական կազմակերպությունների հետ, մարզկոմների ու յերկրկոմների քարտուղարներին իրազեկ չեն դարձրել իրենց ձեռնարկումներին ու վորոշումներին, վորի հետևանքով մարզկոմները, յերկրկոմները և ազգային կոմկուսակցությունների կենտկոմները յերբեմն Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների ընդունած վորոշումների մասին իմացել են վորոշումները հրապարակելուց հետո միայն: Այս պրակտիկան վոչ մի ընդհանուր բան չունի տեղական կուսակցական մարմիններից լիազորների անկախության ճիշտ ըմբռնման հետ, ավելորդ ու վնասակար տարաձայնություններ է առաջացնում լիազորների և տեղական կուսկազմակերպությու-

թյունների ղեկավարների միջև և ամենևին չի օժանդակում ստուգման գործի բարելավմանը։

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոն պարտավորեցնում է բոլոր լիազորներին՝ կանոնավոր կերպով ինֆորմացիա տալ մարզկոմների, յերկրկոմների ու ազգային կոմկուսակցությունների կենտկոմների առաջին քարտուղարներին՝ իրենց աշխատանքի պլանի վերաբերյալ և ժամանակին նախազգուշացնել նրանց ընդունելիք վորոշումների մասին։

Լիազորներն իրենց ամենորյա ամբողջ աշխատանքում պետք է ամենասերտ կերպով կապված լինեն շրջկոմի, մարզկոմի և ազգային կոմկուսակցության կենտկոմի հետ, վորպեսզի տեղական կուսակցական, խորհրդային ու տնտեսական կազմակերպությունների ղեկավարների վրա ներգործեն վոչ միայն իրենց, այլև կուսակցական կոմիտեների վորոշումներով։ Այս միջոցառումն ամենևին չի սահմանափակում լիազորի ինքնուրույնության ու



անկախությունը, մանավանդ վոր նա ցանկացած ժամանակ և ցանկացած հարցը կարող է Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյի կամ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի լուծմանն առաջադրել, յեթե ինքը համաձայն չէ մարզկոմի, յերկրկոմի կամ ազգային կոմկուսակցության Կենտկոմի առաջարկներին։

Ըստ վորում, Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորները պետք է յելնեն այն բանից, վոր իրենք ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի առաջ պատասխանատու յեն կատարումը ժամանակին ստուգելու համար և այն բանի համար, վոր իրենց վերահսկիչական աշխատանքն իսկապես ապահովի ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումների կատարումը։

5. Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումների կատարումն ստուգելու աճած խնդիրների կապակցությամբ պլենումը պարտավորեցնում է Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյին

ու լիազորներին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել լիազորների ապարատը վորակյալ, գործն իմացող կուսակցական աշխատողներով ու մասնագետ կոմունիստներով ուժեղացնելու ուղղությամբ, և մեկ ամսվա ընթացքում վերանայել յուրաքանչյուր մարզի, երկրամասի ու հանրապետության լիազորների հաստիքները՝ առանձին-առանձին:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների ապարատի և կենտրոնական ապարատի աշխատողների կադրերը հաշվի առնելու, ուսումնասիրելու և նրանց ընտրության նպատակով՝ Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյին կից ստեղծել կադրերի ընտրության խումբ՝ Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյի անդամներից մեկի գլխավորությամբ:



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՄԿ(բ)Կ
ԿԵՆՏԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՒՍԿՈԼԵԳԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՀԱՄԿ(բ)Կ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀամԿ(բ)Կ ԿԿ կից կուսակցական վերահսկողության հանձնաժողովի III պլենումի վորոշումը

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1935 թվականի դեկտեմբերյան պլենումը, վորպես կուսակցական փաստաթղթերի ստուգման փորձից բղխող գլխավոր դաս, նշեց, վոր կուսակցության անդամները և կուսակցական կազմակերպությունները դեռ մինչև այժմ էլ վատ են յուրացրել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի այն բազմիցս արված ցուցումները, թե անհրաժեշտ է ամեն կերպ բարձրացնել բոլշևիկյան զգաստությունը և կուսակցական կարգապահությունը կոմունիստների մեջ:

Կուսակցական փաստաթղթերի ստուգումը ցույց տվեց, վոր կուսակցական շատ կազմակերպություններ կոմունիստնե-

րին կուսակցության կանոնադրությունը խստիվ պահպանելու վոգով չեն դաստիարակել և լուրջ ու սիստեմատիկ պայքար չեն մղել կուսակցական կարգապահության խախտումների դեմ: Այդ առանձնապես ակնառու կերպով վկայում է Համկ(բ)Կ անդամներին ու թեկնածուներին կուսակցական տույժերի յենթարկելու միանգամայն սխալ այն պրակտիկան, վորն արմատացել է մի քանի կուսակցական կազմակերպություններում, յերբ տույժերը կուսակցական ու պետական կարգապահությունն ամրացնելու միջոցից դարձնում են ձևական-բյուրոկրատիկ մի միջոց: Թույլ մերկացնելով ներս սողոսկած, քայքայված ու կուսակցությանը թշնամի մարդկանց, հաճախ անպատիժ թողնելով նրանց հանցավոր գործունեությունը, միևնույն ժամանակ կուսակցական շատ կազմակերպություններ ընդհանուր կերպով, մասսայաբար տույժերի յեն յենթարկում կուսակցության անդամներին ու թեկնածուներին ամեն մի չնչին առիթով, վորը հաճախ վոչ մի առըն-



չություն չուներ կուսակցական կարգապահությունը խախտելու հետ: Այդ պրակտիկան չէր կարող չնսեմացնել կուսակցական տույժերի դերը, վորպես կուսակցության անդամներին կուսակցական ու պետական խիստ կարգապահության վոգով դաստիարակելու մի միջոցի, և անտարբեր ու անպատասխանատու վերաբերմունք եր ստեղծում կուսակցության անդամների մեջ դեպի այդ տույժերը:

Կուսակցական տույժերի, վորպես կուսակցության անդամներին կուսակցական ու պետական կարգապահության վոգով դաստիարակելու մի միջոցի, նպատակն ու նշանակությունը չհասկանալով միայն կարելի յե բացատրել այն փաստը, վոր կուսակցական սկզբնական շատ կազմակերպություններ դադարել են ընդհանուր ժողովներում ուշի-ուշով քննելուց կուսակցության անդամների դանցանքները և իրենց խնդիրը հանգեցրել են միմիայն այն բանին, վոր կուսակցական կոմիտեյի նեղ նիստում քըննարկում են տույժի այն միջոցները, վո-

րոնց յենթարկվելու յե կուսակցության ղանցառու անդամը կամ թեկնածուն: Այդպիսի բյուրոկրատիկ պրակտիկան գործնականում հանգեցնում է այն բանին, վոր կուսակցական կազմակերպությունները չեն դաստիարակվում նրանց առանձին անդամների սխալների ուշադիր, բազմակողմանի քննությամբ, ըստ էության զրկված են կուսակցության անդամների վրա ամբողջ կուսակցական կոլեկտիվի հեղինակությամբ ներգործելու հնարավորությունից և չեն դնում իրենց պատասխանատվությունը՝ կուսակցության յուրաքանչյուր առանձին անդամի ու թեկնածվի սխալների ու գործողությունների համար:

Կուսակցական տույժերի, վորպես կուսակցական ու պետական կարգապահությունն ամրացնելու միջոցի, նպատակն ու նշանակությունը չհասկանալով միայն կարելի յե բացատրել այն բազմաթիվ փաստերը, յերբ կուսակցության անդամները տույժի յեն յենթարկվում իրենց բացակայությամբ, առանց գործը քննելիս նրանց կանչելու,



առանց ուշի-ուշով հետաքննելու նրանց գանգատները:

Այդպիսի պրակտիկան իրականում հանգում է կուսակցական տույժերի դերի նսեմացմանը, առաջ է բերում բազմաթիվ, յերբեմն ակնհայտորեն սխալ տույժեր, վորոնք դրվում են այն նկատառումով, թե կուսակցական վերադաս օրգանները կուղղեն ու կմեղմացնեն դրանք և, վերջապես, վկայում է, վոր վերահսկողություն չկա կուստույժի յենթարկված կոմունիստների հետագա վարքագծի վրա, վոր անտարբեր վերաբերմունք է ցուցաբերվում այն բանին, թե ուղղվե՞լ են արդյոք նրանք, թե վոչ:

Կուսակցական տույժերի, վորպես կուսակցական ու պետական կարգապահությունն ամրացնելու միջոցի, նպատակն ու նշանակությունը չհասկանալով միայն կարելի յե բացատրել կուստույժի յենթարկելու պրակտիկայում գոյություն ունեցող խեղաթյուրումների այն բազմաթիվ փաստերը, յերբ ջնջվում է սահմանը կուսակ-

ցական տույժերի և այն տույժերի միջև, որոնց ենթարկվում են կոմունիստները խորհրդային օրգանների կողմից, համաձայն գործող օրենքների, որոնց պահպանումը պարտադիր է ինչպես կուսակցության անդամների, այնպես էլ անկուսակցականների համար: Գործնականում այդպիսի պրակտիկայի հետևանքն է լինում շատ դեպքերում այն, որ կուսակցության անդամի՝ ծառայության գծով կատարած ամեն մի զանցանք նախապես քննում է կուսկոմը, որը որոշում է նրան կուսակցական և վարչական տույժի ենթարկելու հարցը, իսկ հիմնարկի կամ ձեռնարկության ղեկավարը հրամանով սոսկ մեքենայորեն ձևակերպում է կուսակցական կոմիտեյի սահմանած վարչական տույժի չափը: Այլ դեպքերում պետական հիմնարկների գծով կուսակցության անդամին որևէ տույժի ենթարկելու արդյունքն է լինում այն, որ մեքենայորեն ընդունվում է նաև կուսակցական տույժի ենթարկելու որոշում: Եվ, վերջապես, կուսակցական



տույժով հաճախ փոխարինվում է կուսակցության անդամի պատասխանատվությունը խորհրդային օրենքի առջև՝ իր կատարած զանցանքի համար:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի պլենումը գտնում է, որ կուսակցության անդամներին ու թեկնածուներին կուսակցական տույժի ենթարկելու վոչ բոլշևիկյան այդ ամբողջ պրակտիկան զգալի չափով արդյունք է նաև Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաների անբավարար աշխատանքի: Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաները, փոխանակ պայքար մղելու կուսակցական տույժերի գործում կատարվող խեղաթյուրումների դեմ, փոխանակ խորապես ու մտածված կերպով քննելու կուսակցության անդամի և թեկնածուի յուրաքանչյուր բողոք և այդպիսի քննության օրինակով ուղղելու կուսակցական կազմակերպությունների սխալները, հենց իրենք, իրենց անբավարար աշխատանքով, նպաստել են այդ պրակտի-

կայի տարածմանը: Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաները քննելու համար վերցրել են հսկայական քանակությամբ գործ՝ անկախ կուսակցության անդամի կամ թեկնածուի զանցանքի բնույթից և, հաճախ առանց խորանալու այդ գործերի էության մեջ, իրենց խնդիրներն ըմբռնել են միմիայն այն նեղ իմաստով, թե հարկավոր է կամ վերականգնել վորպես կուսակցության անդամ, կամ պատժել, կամ մեղմացնել ՀամԿ(բ)Կ անդամին տրված պատիժը:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաների այդպիսի աշխատանքի պրակտիկան հանգեցրել է այն բանին, վոր նրանք, ծանրաբեռնված լինելով կուսակցության անդամների զանցանքների վերաբերյալ բազմաթիվ բողոքներով և ամեն տեսակ այլ գործերով, չեյին կարողանում ամենայն խնամքով և անհրաժեշտ ուշադրությամբ քննել կուսակցության անդամների բողոքները: Կուսակցական կոլեգիաները հաճախ ձևականորեն ու մակերեսորեն եյին մոտենում բողոքների քննությանը, առանց հանգամանորեն ուսումնասիրելու գործի էությունը և առանց հրավիրելու կուսատույժի յենթարկող կուսակցական կազմակերպության ներկայացուցչին, յերբեմն կուրորեն վստահելով բողոքողի կեղծ տեղեկանքներին ու փաստաթղթերին: Դրա հետևանքով կուսակցական կոլեգիաները մի շարք դեպքերում վերացնում եյին կուսակցական կազմակերպությունների ճիշտ վորոշումները, կուսակցության մեջ վերականգնելով ՀամԿ(բ)Կ-ին խորթ ու թշնամի մարդկանց, իսկ սխալ վորոշումները վերացնելիս համապատասխան կուսակցական որգանների առջև հարց չեյին դնում կուսակցական կազմակերպությունների կատարած սխալներն ուղղելու մասին:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաների աշխատանքի այդպիսի պրակտիկան նպաստում եր այն բանին, վոր կուսակցական որգանները շատ դեպքերում իրենց պարտավոր չեյին համարում քննել կուսակցության անդամի յուրա-

քանչյուր պանցանքը, այդ բոլոր գործերը մեքենայորեն հանձնում էին կուսակցական կոլեգիաներին քննելու, կուսակցական տույժի ենթարկելիս չէին զբաղվում ստորադաս կուսակցական կազմակերպությունների գործած սխալների ուղղումով և բոլորովին հրաժարվում էին քննելու այն դիմումները, որ տալիս էին կուսակցության անդամներն իրենց վրա դրված տույժը վերանայելու համար: Կուսկոլեգիաները, փոխանակ պայքար մղելու կուստույժերի վերաբերյալ գործերը քննելու այդպիսի սխալ կարգի դեմ, հաշտվել են դրա հետ, նորմալ համարելով այդ: Նրանք մարզկոմների, երկրկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների առջև հարց չեն դրել՝ Համ. Կ(բ)Կ կանոնադրությունը խախտող այդ կարգը փոխելու մասին և չեն հետապնդել, որ մարզկոմները, երկրկոմները և ազգային կոմկուսների կենտկոմներն իրենք ուղղեն այն սխալները, որ քաղաքային, շրջանային ու սկզբնական կուսակցական կազմակերպությունները գործել են ՀամԿ(բ)Կ



անդամներին ու թեկնածուներին կուստույժի ենթարկելու բնագավառում:

Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի կուսկոլեգիաների աշխատանքի այդ պրակտիկան շատ դեպքերում հանդեցնում էր մխանդամայն աննորմալ երևույթների, երբ խորհրդային, տնտեսական և այլ կազմակերպությունների ղեկավարները, փոխանակ պայքար մղելու իրենց ապարատում աշխատողների կողմից պետական կարգապահությունը խախտելու դեպքերի դեմ, օգտագործելով վարչական կարգով տույժի ենթարկելու իրավունքը, որ տալիս է նրանց օրենքը, մի օրենք, որին հավասարապես ենթակա են թե՛ կուսակցության անդամները և թե՛ անկուսակցականները, — վերցնում էին իրենց վրայից այդ պատասխանատվությունը, հանձնելով Համ. Կ(բ)Կ անդամների ու թեկնածուների գործերը կուսկոլեգիաների քննությանը: Կուսկոլեգիաները, փոխանակ վճռաբար պայքար մղելու այդպիսի աննորմալ երևույթների դեմ, նման պրակտիկայով քողարկում էին

այդ հիմնարկների ղեկավարների անպատասխանատվությունը և ըստ էության իրենց վրա են վերցնում պատասխանատվությունը դրանց մեջ աշխատող կոմունիստների համար։

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի պլենումն առանձնապես անհանդուրժելի յե համարում տեղի ունեցած այնպիսի դեպքերը, յերբ կուսակցության անդամին ակնհայտորեն սխալ են վտարում ՀամԿ(բ)Կ-ից, դատի յեն տալիս և զրկում աշխատելու իրավունքից, իսկ կուսկոլեգիան, քննելով այդ գործը և գտնելով, վոր կուսակցության անդամի հետ սխալ են վարվել, անպատիժ է թողնում կուսակցական այն չինովնիկներին, վորոնք գիտակցաբար թե անգիտակցաբար՝ կամայականություն են թույլ տվել ՀամԿ(բ)Կ անդամի նկատմամբ։

Կուսակցության անդամներին ու թեկնածուներին կուսակցական տույժի յենթարկելու գործում ու կուսկոլեգիաների աշխատանքում գոյություն ունեցող բոլոր այդ



թերությունները միանգամայն անհանդուրժելի համարելով և գտնելով, վոր դրանք անհրաժեշտ է անհապաղ ու վճռաբար ուղղել, վորպեսզի կուսակցական տույժերն իրոք դառնան ՀամԿ(բ)Կ անդամների մեջ բոլշեվիկյան կարգապահություն պատվաստելու մի միջոց, Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի պլենումը վորոշում է.

## ՀԱՄԿ(բ)Կ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. *Սխալ համարել գոյություն ունեցող այն պրակտիկան, յերբ կուսակցական սկզբնական կազմակերպությունները հետևում են վերադաս օրգաններին և կուսակցության անդամների բոլոր գանգատները քննում են վոչ թե կուսակցական ընդհանուր ժողովներում, այլ կուսակցական կոմիտեների նիստերում։ Կուսակցական սկզբնական կազմակերպությունները (կու-*

սակցության անդամների դանցանքները պարտավոր են քննել ընդհանուր ժողովներում, վորպեսզի հարցը քննարկելու շնորհիվ դաստիարակվեն վոչ միայն կուսակցության դանցառու անդամը և թեկնածուն, այլև ինքը՝ կուսակցական կազմակերպությունը:

Կուսակցական սկզբնական կազմակերպությունները ուշի-ուշով և բազմակողմանի կերպով քննելով կուսակցության անդամների դանցանքները, պետք է ստեղծեն այնպիսի դրություն, վոր կուսակցական կազմակերպության մեջ պատասխանատվության զգացմունք պատվաստվի կուսակցության յուրաքանչյուր անդամի ու թեկնածվի վարքագծի համար և վերացվի այն սխալ պատկերացումը, թե կուսակցության անդամի կուսակցական և պաշտոնավարական վարքագծի հարցը միայն կուսկոմիտեյի գործն է և վոչ թե ամբողջ կուսակցական կոլեկտիվի:

Կուսակցական կազմակերպությունները, անողոքաբար ու վճռաբար պայքար մղելով



խաբեյությամբ ՀամԿ(բ)Կ շարքերը սողոսկած ամեն տեսակ թշնամի ու խորթ տարրերի դեմ, պետք է պատահական կամ առանց չար դիտավորության դանցանք գործած կուսակցականների նկատմամբ ավելի լայն գործադրեն կուսակցության անդամներին կուսակցական դաստիարակություն տալու և նրանց մեջ կարգապահությունն ամրացնելու այնպիսի միջոցներ, ինչպիսիք են կուսակցության անդամի կատարած սխալը համբերատար կերպով ընկերաբար բացատրելը, նրան նախազգուշացնելը, նրան հասարակական կշտամբանքի յենթարկելը և այլն:

2. Կուսակցական կազմակերպությունները և Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կոլեգիաները կուսակցական ու պետական կարգապահությունն ամրացնելու իրենց աշխատանքում պետք է առաջնորդվեն նրանով, վոր կուսակցության անդամները, ինչպես և անկուսակցականները, խորհրդային որենքի առջև պատասխանատու յեն պետության հանդեպ իրենց

գործած հանցանքների համար: Կուսակցական տույժերը և մանավանդ կուսակցությունից վտարելը բոլշևիկի համար պատժի ամենածանր տեսակն է, սակայն այդ տույժը ոչ մի չափով չի կարող փոխարինել այն պատիժը, վորին պետք է յենթարկվի նա դատական կամ վարչական կարգով: Դրա համապատասխան, կուսակցական կազմակերպությունները և Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կոլեգիաները պետք է խստիվ սահմանազծեն կուսակցության կանոնադրությունը, կուսակցական կարգապահությունը և կուսակցական եթիկան խախտելու համար կոմունիստներին տրվող կուսակցական տույժերն այն տույժերից, վորոնց յենթարկվում են կոմունիստները խորհրդային օրենքի այս կամ այն խախտումների համար: Կուսկազմակերպությունները և Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կոլեգիաներն այն դեպքերում, յերբ կուսակցության անդամը դատի յե տրվում, պարտավոր են, նայած հետաքննության ու դատա-



վարության արդյունքների, քննել նրա կուսակցական դրությունը:

Վերջ տալ այն պրակտիկային, յերբ կուսակցական կոմիտեները՝ ծառայության գծով կատարած զանցանքի համար մեքենայորեն կուսակցական տույժի յեն յենթարկում կուսակցության այն անդամին, վորը տույժի յե յենթարկվել վարչական կարգով: Կուսակցական կազմակերպությունները ՀամԿ(բ)Կ անդամների՝ ծառայության գծով ունեցած վարքագծի և զանցանքների հարցը քննում են այն դեպքերում, յերբ նրանք բավական չեն համարում սահմանափակվել վարչական տույժով և անհրաժեշտ են գտնում, բացի դրանից, կուսակցական կարգով ևս պատժել կուսակցության այն անդամին, վորը խախտել է պետական կարգապահությունը:

3. Արգելել այն սխալ ու վնասակար պրակտիկան, յերբ իր կատարած աշխատանքից անհապաղ հեռացվում է կուսակցության այն անդամը կամ թեկնածուն, վորը մեքենայորեն դուրս է մնացել կամ վտար-

վել է ՀամԿ(բ)Կ շարքերից այնպիսի զանցանքների համար, վորոնք չեն արատավորում նրան վորպես խորհրդային պետության անկուսակցական աշխատողի:

Կուսակցական կազմակերպությունները և կուսկոլեգիաները կուսակցությունից վտարված անդամին աշխատանքից կարող են հեռացնել այն դեպքում, յերբ նա վարում է խորհրդային, տնտեսական կամ այլ այնպիսի պատասխանատու պաշտոն, վորի ղեկավարումը նա չի կարող ապահովել կուսակցությունից վտարված լինելու հետեվանքով: Սակայն դա չի զրկում նրան նույն կամ այլ հիմնարկում, ձեռնարկության մեջ, վորպես անկուսակցական, այլ աշխատանք ստանալու իրավունքից:

4. Արգելել սկզբնական կուսակցական կազմակերպություններին, շրջկոմներին, քաղկոմներին, մարզկոմներին, յերկրկոմներին և Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաներին՝ կուսակցական տույժի յենթարկելու վորոշում ընդունել, առանց նիստի հրավիրելու կու-



սակցության այն անդամին, վորին մեղադրանք է ներկայացված, և առանց ուշի-ուշով քննելու նրա գործը: Վերադաս կուսակցական որգաններում գործը քննելիս, կուսակցության այն անդամի հետ միասին, վորը յենթարկված է տույժի, պետք է հրավիրվի նաև տույժի յենթարկող կուսակցական կազմակերպության ներկայացուցիչը, վորպեսզի կուսակցության անդամի զանցանքի քննումը միակողմանի չլինի:

5. Առաջարկել տեղական կուսակցական կազմակերպություններին և Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաներին՝ վերացնել գոյություն ունեցող այն պրակտիկան, յերբ կուսակցության անդամի զանցանքների համար տրվող բոլոր պատիժները մտցվում են հաշվառման քարտի կամ անձնական գործի մեջ: Սահմանել, վոր սկզբնական կուսակցական կազմակերպությունների կողմից կուսակցության անդամին տրվող կուսակցական տույժերը հաշվառման քարտի մեջ կարելի յե մտցնել միմիայն այն դեպքում, յեթե նրանք հաս-

տառված են կուսակցության շրջկոմի կողմից և վերջինս հատուկ վորոշում է ընդունել, թե տվյալ կուսատույժը պետք է մտցվի հաշվառման քարտի կամ անձնական գործի մեջ:

Անպայման արգելել հաշվառման քարտի կամ անձնական գործի մեջ մտցնել այն բոլոր պատիժները, վորոնք տրվում են Համ. Կ(բ)Կ անդամին կամ թեկնածվին վարչական կարգով, բացի դատարանով տրվող պատիժներից: Կուսակցության անդամին կամ թեկնածվին տրվող վարչական տույժերը մտցվում են միմիայն գերատեսչություններում գտնվող անձնական գործերի կամ աշխատանքային քարտերի մեջ:

6. Սխալ համարել գոյություն ունեցող այն պրակտիկան, յերբ կուսակցական կազմակերպությունները այս կամ այն կոմունիստին՝ նրա գործած զանցանքի համար պատժելու վորոշում ընդունելուց հետո, դրանով վերջացած են համարում իրենց պարտականությունը և այլևս չեն հետաքըր-



քըրվում կուսակցության այդ անդամի վարքագծով:

Առաջարկել բոլոր կուսակցական կոմիտեներին՝ այնպիսի կարգ սահմանել, վոր նրանք, անկախ նրանից, թե կուսակցության անդամը վորոշ ժամանակամիջոց անցնելուց հետո արծարծո՞ւմ է արդյոք իր վրա դրված տույժը վերացնելու հարցը, նորից վերադառնան նրա վարքագծի քըննարկմանը, վորպեսզի այդ քննարկմամբ պարզեն, թե ուղղվե՞լ է արդյոք կուսակցության այդ անդամը, և այդ դեպքում լուծեն նրանից կուսատույժը վերացնելու հարցը:

7. Բոլոր դեպքերում, յերբ կուսակցության այն անդամը կամ թեկնածուն, վորի նկատմամբ հարց է դրված նրան ՀամԿ(բ)Կ շարքերից վտարելու մասին, իր ամբողջ վարքագծով ապացուցել է, վոր նրա զանցանքները վոչ թե կանոնադրությունը գիտակցաբար խախտելու արդյունք են, այլ այն բանի, վոր նա բավականաչափ չի յուրացրել բոլշևիկյան կազմակերպվածության

ու կարգապահության հիմունքները, և հետևանք են այն բանի, որ կուսակցական կազմակերպությունը դեռ բավականաչափ չի դաստիարակել նրան որպես բոլշևիկի,— թույլ տալ կուսակցական կազմակերպություններին, առանձին դեպքերում, կուսակցությունից վտարելու փոխարեն փոխադրել նրան թեկնածուների կամ համակիրների շարքերը կես տարուց մինչև մեկ տարի ժամանակով:

Թեկնածու և կամ համակիր փոխադրելու մասին սկզբնական կուսակցական կազմակերպության, շրջկոմի կամ քաղկոմի ընդունած որոշումն անպայման հաստատվում է մարզկոմի, երկրկոմի կամ ազգային կոմկուսի կենտկոմի կողմից:

Կուսակցական տույժի նույն միջոցը կարող են գործադրել նաև կուսկոլեգիաները՝ բողոքը քննելիս:

## ԿՈՒՍԿՈԼԵԳԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

8. Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի պլենումը գտնում է, որ



կուսկոլեգիաների կարևորագույն խնդիրն է՝ ամենախիստ կերպով հետևել, որ կուսակցական տույժերի ասպարեզում ճիշտ կիրառվի կուսակցության կանոնադրությունը, որը, ինչպես ցույց տվեց կուսակցական փաստաթղթերի ստուգումը, մի շարք դեպքերում ամենակոպիտ կերպով խախտվել է ոչ միայն կուսակցական կազմակերպությունների, այլև կուսկոլեգիաների աշխատանքի պրակտիկայում:

Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի կուսկոլեգիաները պետք է հիմնովին յուրացնեն այն դասերը, որոնք բղխում են կուսակցական փաստաթղթերի ստուգման արդյունքների վերաբերյալ Համ. Կ(բ)Կ Կենտկոմի պլենումի ընդունած որոշումից, և դրա համաձայն վճռաբար վերակառուցեն իրենց աշխատանքը: Կուսկոլեգիաներն իրենց ամբողջ աշխատանքի հիմքը պետք է դարձնեն այն բողոքների քննությունը, որոնք ստացվում են թե Համ. Կ(բ)Կ շարքերից վտարված և թե այս կամ

այն կուսակցական տույժի դեմ բողոքող անդամներից ու թեկնածուներից:

Կուսկոլեգիաները բողոքները քննելիս պետք է ոչ միայն ուշի-ուշով վերլուծեն կուսակցության անդամի գործած զանցանքի պատճառները և պարզեն այդ զանցանքի հետ կապված փաստերը, այլև հանգամանորեն ստուգեն իրեն՝ կուսակցության անդամին, որպեսզի անհատական մոտեցում ապահովվի դեպի յուրաքանչյուր կոմունիստ: Խստիվ պատժելով և ՀամԿ(բ)Կ շարքերից վտարելով կուսակցությանը խորթ, այլասերված, քայքայված և անուղղելի մարդկանց, կուսկոլեգիաները միաժամանակ պետք է զգայուն մոտեցում ցուցաբերեն կուսակցության այն անդամներին ու թեկնածուներին, որոնք անպայման ընդունակ են ուղղվելու, ազնվորեն ու ամբողջովին գիտակցելու իրենց գործած զանցանքները և պարտավորվում են անձնվեր աշխատանքով ու կուսակցական վարքագծով քավել իրենց հանցանքը կուսակցության հանդեպ:

Կուսակցական վերահսկողության հանձ-



նաժողովի կուսկոլեգիաները պետք է հասկանան, որ կուսակցական կոլեգիաների աշխատանքը՝ բողոքների քննարկման աշխատանքը կարևորագույն աշխատանք է, և կուսկոլեգիաները, ճիշտ կատարելով այդ աշխատանքը, կարող են ուղղել ոչ միայն կուսակցության առանձին անդամների կոնկրետ սխալներն ու զանցանքները, այլև առանձին կուսակցական կազմակերպությունների սխալ, մեր կուսակցության կանոնադրությունը խախտող պրակտիկան և կուսակցական ապարատի աշխատանքում գոյություն ունեցող բյուրոկրատիկ խեղաթյուրումները:

Այն բոլոր դեպքերում, երբ կուսկոլեգիաները գտնեն, որ համապատասխան կուսակցական կազմակերպությունները սխալ որոշում են ընդունել կուսակցության անդամին պատժելու կամ նրան ՀամԿ(բ)Կ շարքերից վտարելու մասին, նրանք առանց սահմանափակվելու այդ որոշման միայն վերացումով, պետք է ուշի-ուշով պարզեն, թե հատկապես ինչո՞ւ է ընդունվել այդ-

պիսի սխալ որոշում, և այն դեպքերում, երբ երևան գա, որ գործին միտումնավոր, ոչ օբյեկտիվ կամ մակերեսային վերաբերմունք է ցուցաբերվել, պատժեն մեղավորներին, իրազեկ դարձնելով այդ մասին թե այդ որոշումն ընդունած կազմակերպությանը և թե վերադաս կուսակցական օրգաններին:

9. Կուսկոլեգիաների անելիքները բողոքների քննարկմամբ սահմանափակելը ոչ մի դեպքում չի բացառում այն առանձին դիմումների քննումը, որոնք ստացվում են ՀամԿ(բ)Կ անդամներից ու թեկնածուներից, ինչպես և անկուսակցականներից՝ կուսակցության անդամի այս կամ այն զանցանքի կամ առանձին կուսակցական կազմակերպությունների սխալ գործողությունների դեմ: Սակայն Կուսվերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաները պետք է ելնեն նրանից, որ յուրաքանչյուր դիմում անպայման իրենք չպետք է քննեն: Շատ դեպքերում կուսկոլեգիաները պարտավոր են միայն միջոցներ ձեռք առնել, որ համա-



պատասխան կուսակցական կազմակերպությունը ժամանակին և ճիշտ քննի ստացված դիմումները:

Արգելել Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաներին՝ զբաղվել որևէ այլ այնպիսի աշխատանքով, որն ուղղակի առնչություն չունի իրենց հիմնական աշխատանքի՝ բողոքների և կուսակցության առանձին անդամների կուսակցական զանցանքների մասին ստացված հայտարարությունների քննության հետ:

10. Կուսկոլեգիաներն իրենց ամբողջ աշխատանքը պետք է ամենասերտ կերպով համաձայնեցնեն համապատասխան մարզկոմների, երկրկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների հետ:

Կուսկոլեգիաները պարտավոր են սիստեմատիկաբար ընդհանրացնել բողոքների քննության հետ կապված փորձը և, բացի կուսկազմակերպությունների գործած առանձին սխալներն ուղղելուց, համապատասխան մարզկոմների, երկրկոմների ու ազգային կոմկուսների կենտկոմների առ-

չև հարց դնեն այն միջոցների մասին, վորոնք անհրաժեշտ են այդ սխալներն առաջիկայում կանխելու համար:

Կուսկոլեգիաները պետք է մարզկոմների, յերկրկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների քննությանը հանձնեն կուսակցության անդամների այն առանձին մասնավոր զանցանքները, վորոնք բնորոշ ու խրատական են այս կամ այն կուսակցական կազմակերպության աշխատանքի համար, կամ բնորոշում են կուսակցական, խորհրդային կամ տնտեսական շինարարության այս կամ այն ճակատամասի ղեկավարման վիճակը:

Համկ(բ)Կ շարքերից վտարելու, կուսակցության մեջ վերականգնելու և թեկնածուների ու համակիրների շարքերը փոխադրելու վերաբերյալ իրենց բոլոր վորոշումները, ինչպես և ղեկավար աշխատանքից կոմունիստներին հեռացնելու վերաբերյալ վորոշումները, Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաները կենսագործում են, համաձայնեցնելով մարզկոմի, յերկրկոմի և ազգային կոմկուս-



ների կենտկոմների հետ: Այն դեպքում, յեթե տարաձայնություն ծագի կուսկոլեգիայի և համապատասխան կուսակցական օրգանի միջև, հարցը փոխադրվում է Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովին՝ ի քննություն:

11. Կուսակցության անդամներից ու թեկնածուներից ստացվող բողոքները կուսկոլեգիայում անպայման պետք է քննվեն բողոքողի և այն կազմակերպության ներկայացուցչի ներկայությամբ, վորը վորոշում է ընդունել կուսակցության այս կամ այն անդամին վտարելու կամ պատժելու մասին: Այն դեպքում, յեթե կուսակցական կազմակերպությունը համաձայն չէ կուսկոլեգիայի վորոշման հետ, նա իրավունք ունի բողոքարկելու այդ վորոշման դեմ՝ Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովին:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաները պետք է ապահովեն, վոր կուսակցության անդամից կամ թեկնածվից ստացված յուրաքանչյուր բո-

ղոք քննվի կուսկոլեգիայում ստացվելուց ամենաուշը 15 օրվա ընթացքում: Այն դեպքում, յեթե բողոքն այդ ժամանակամիջոցում չքննվի, կուսակցության անդամը կամ թեկնածուն իրավունք ունեն գանգատ տալու Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովին:

12. Կուսակցության անդամների զանցանքներն ավելի բազմակողմանիորեն քննելու և քննության դաստիարակչական նշանակությունն ուժեղացնելու նպատակով Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաները պարտավոր են համապատասխան մարզկոմի, յերկրկոմի և ազգային կոմկուսի կենտկոմի հետ համաձայնելուց հետո, ավելի լայն չափով, քան ներկայումս, կարևորագույն գործերը քննել անմիջականորեն այն կազմակերպության մեջ, վորտեղ գտնվում է ՀամԿ(բ)Կ զանցառու անդամը, պայմանով, վոր կուսկոլեգիան այդ կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովում զեկուցի կուսակցության անդամի զանցանքի բոլոր



հանգամանքներն ու իր կատարած քննությունը, մերկացնի այդ իսկ կազմակերպության աշխատանքի թերությունները և այդպիսով ոգնի լրիվ յուրացնելու այդ գործի քննությունից բխող բոլոր դասերը:

Կուսկոլեգիաները պարտավոր են ավելի լայն չափով, քան ներկայումս, ոգտագործել մամուլը, սիստեմատիկաբար լուսաբանելով թերթերում կուսակցական կազմակերպությունների համար ամենաբնորոշ ու խրատական առանձին գործերը:

13. Համաձայն այն խնդիրների, վորոնք դրված են Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաների առջև տեղերում, պարտավորեցնել Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյին վճռաբար այնպես փոխել կենտրոնական կուսկոլեգիայի կողմից տեղական կուսկոլեգիաների աշխատանքը ղեկավարելու պրակտիկան, վորպեսզի սա չսահմանափակվի միմիայն ստացվող բողոքների քննությամբ, այլ որը-որին, ոպերատիվ և սիստեմատիկ կերպով ղեկավարի տեղական

կուսկոլեգիաների աշխատանքը: Կուսկոլեգիաները ղեկավարելու աշխատանքը պետք է վճռական տեղ գրավի կենտրոնական կուսկոլեգիայի գործունեության մեջ: Պարտավորեցնել Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյին՝ ավելի լայն չափով կազմակերպել առանձին կուսկոլեգիաների զեկուցումները Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյում՝ իրենց գործունեության և յերևան բերած այն առանձին գործերի մասին, վորոնք վերաբերում են ՀամԿ(բ)Կ կանոնադրության ու կուսակցական կարգապահության խախտմանը:

14. Լուծարքի յենթարկել յերկաթուղային ու ջրային տրանսպորտի կուսկոլեգիաները և յերկաթուղային ու ջրային տրանսպորտում աշխատող՝ կուսակցության անդամների բողոքների հետ կապված գործերի քննությունը հանձնարարել այն մարզերի, յերկրների ու հանրապետությունների տերիտորիալ կուսկոլեգիաներին, վորոնց



կուսկազմակերպություններում հաշվառման են յենթարկվել նրանք:

15. Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի պլենումն անհրաժեշտ է համարում միջոցներ ձեռք առնել ուժեղացնելու տեղական կուսկոլեգիաները կուսակցական փորձառու աշխատողներով: Պարտավորեցնել Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի Բյուրոյին՝ յերկու ամսում համապատասխան յերկրային, մարզային ու հանրապետական կուսկազմակերպությունների հետ միասին վերանայել կուսկոլեգիաների աշխատողների կազմը, նպատակ ունենալով ամրացնել դրանք կուսակցական բավականաչափ ուժերով:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այն պայմաններում, յերբ մեր կուսակցական, խորհրդային, տնտեսական օրգանների և նրանց ղեկավարների ուժն ու հեղինակությունն աննախընթաց չափով աճել են,- յերբ կուսակցության շուրջը, ընկեր Ստալինի շուրջը համախմբվել է ամբողջ ժողովուրդը—մեր ճանապարհին դեռևս հանդիպած դժվարությունները գլխավորապես կազմակերպական ղեկավարման դժվարություններ են: Այդ դժվարությունները կարելի յե հաղթահարել միայն վերացնելով մեր կազմակերպական աշխատանքի հետ մնալը կուսակցության քաղաքական գծի պահանջներից:

Յերկրի ամբողջ քաղաքական, տնտեսա-

կան և կուլտուրական կյանքում կազմակերպական ղեկավարման մակարդակը քաղաքական ղեկավարման մակարդակին բարձրացնելու համար կուսակցության XVII համագումարն առաջադրեց յերկու հիմնական խնդիր—մարդկանց ընտրությունը և կատարման ստուգումը:

Լենինն ու Ստալինը միշտ էլ այդ խնդիրները դրել են կուսակցության ամբողջ կազմակերպական աշխատանքի ուշադրության կենտրոնում:

«Կատարման ստուգման ճիշտ կազմակերպումը,—ասում է ընկեր Ստալինը,—վճռական նշանակություն ունի բյուրոկրատիզմի ու կանցելյարշչինայի դեմ պայքարելու գործում: Իրագործվո՞ւմ են արդյոք ղեկավար կազմակերպությունների վորոշումները, թե բյուրոկրատներն ու կանցելյարիստները քնեցնում են: Արդյոք ճի՞շտ են իրագործվում դրանք, թե խեղաթյուրվում են: Արդյոք ազնվորե՞ն, բոլշևիկորե՞ն է աշխատում ապարատը, թե դատարկ տեղը պտտվում է,—այդ ամենի մասին կարելի յե ժամանակին իմանալ միմիայն կատարման լավ հիմքերի վրա դրված ստուգման հետևանքով: Կատարման՝ լավ հիմքերի վրա դրված ստուգումն այն լուսարձակն է, վորն ոգնում է ուզածդ ժամանակ լուսավորելու ապարատի աշխատանքի վիճակը և լույս աշխարհ հանելու բյուրոկրատներին ու կանցելյարիստներին: Կարելի յե վստահորեն ասել, վոր մեր բացերի ու ճեղքվածքների իննը տասներորդականը բացատրվում է կատարման՝ ճիշտ հիմքերի վրա դրված ստուգման բացակայությամբ: Տարակույս չի կարող լինել, վոր կատարման այդպիսի ստուգման առկայության դեպքում բացերն ու ճեղքվածքներն անշուշտ կկանխվեյին»:

Կատարման ստուգումն ուժեղացնելու և սոցիալիստական շինարարության նոր պայմաններին հարմարեցնելու անհրաժեշտության հետևանքով կազմակերպվեցին Կուսակցական և Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովները:

Կուսակցական Վերահսկողության Հանձ-

նաժողովի որերս վերջացած պլենումը, վորի՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից հաստատված վորոշումներն այսոր տպագրվում են, նշեց, վոր «ՀամԿ(բ)Կ XVII համագումարի վորոշմամբ ստեղծված Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի՝ տեղական կուսակցական կազմակերպություններից անկախ լիազորների ինստիտուտը լրիվին արդարացրեց իր կոչումը»: Բարելավվել է կուսակցության և նրա Կենտկոմի վորոշումների կատարման ստուգումը և դրանով իսկ բարձրացել է կուսակցական, խորհրդային և տնտեսական որգանների կազմակերպական-գործնական ղեկավարման վորակը:

Սակայն Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի լիազորների աշխատանքում դեռ եական թերություններ կան: Նրանք հաճախ ուժերը վատնում են մանրուքների վրա, չեն կարողանում իրենց ուշադրությունը կենտրոնացնել հիմնականի ու գլխավորի վրա: Փոխանակ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի յուրաքանչյուր կարևորագույն



վորոշում իրենց սիստեմատիկ հսկողության տակ առնելու, նրանք հաճախ կազմում են իրենց սեփական մեծածավալ պլանները, ծանրաբեռնելով իրենց յերկրորդական հարցերով, հեռանալով իրենց ուղղակի խնդիրներից և չեղվելով տեսչականության ուղին:

Կուսվերահսկողության Հանձնաժողովի լիազորները համարյա չեյին զբաղվում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ կուսակցական շինարարության հարցերի վերաբերյալ վորոշումների կատարման ստուգմամբ և թույլ եյին կապված պրոֆմիությունների, կոմյերիտմիության, խորհուրդների ու մամուլի վերահսկչական աշխատանքի հետ:

Այդ թերությունների վերացումը կբարձրացնի վերահսկողության գործունեյությունը և դրանով իսկ կհանգեցնի լիազորների հեղինակության ամրապնդմանը և նրանց անկախությանը՝ տեղական կուսակցական որգաններից:

Կուսվերահսկողության Հանձնաժողովի պլենումն իր լիազորների վրա պատասխա-

նատվություն դրեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումները ժամանակին կատարելու համար: Պետք է ապահովվի մի այնպիսի դրություն, որ Կուսվերահսկողությունն իմանա և ցանկացած րոպեին կարողանա կուսակցության Կենտրոնական Կոմիտեին հաղորդել, թե ինչպես են կատարվում նրա դիրեկտիվները կենտրոնական հիմնարկների և տեղական կազմակերպությունների կողմից:

Կուսվերահսկողության Հանձնաժողովի պլենումի այդ որոշումների իրացումը կբարձրացնի կազմակերպական ղեկավարման որակը, կօգնի ավելի լավ դաստիարակելու կադրերը գործնական աշխատանքում, կանխելու սխալները և ժամանակին օգնելու այն աշխատողներին, որոնք օգնության կարիք ունեն:

Կուսակցական կադրերի ճիշտ դաստիարակությունը կազմակերպելու համար բացառիկ նշանակություն ունի Կուսվերահսկողության Հանձնաժողովի պլենումի որոշումը յերկրորդ հարցի վերաբերյալ՝



«Կուսվերահսկողության Հանձնաժողովի աշխատանքի և ՀամԿ(բ)Կ անդամներին և թեկնածուներին կուսակցական տույժի յենթարկելու կարգի մասին»:

Այդ որոշումը սովորեցնում է ավելի վարպետորեն տիրապետել համոզելու զենքին՝ կուսակցական շարքերի մաքրության և մարտունակության համար մղվող պայքարում, ուժեղացնում է գաղափարականությունը կուսակցական աշխատանքում: Այդ որոշումը բարձրացնում է սկզբնական կազմակերպությունների դերն ու նշանակությունը, նպաստում է ներկուսակցական դեմոկրատիայի աճմանն ու կուսակցական աշխատանքի աշխուժացմանը: Այդ որոշումը բխում է կադրերի վերաբերմամբ ուշադիր, հոգատար լինելու մասին ընկեր Ստալինի ցուցումներից:

Շատ կուսակցական կազմակերպություններ կադրերը սիստեմատիկորեն դաստիարակելու և դրանք աշխատանքի մեջ ամրացնելու փոխարեն տարվել են ռեպրեսիաներով, վարչարարություն են գործել:

Կուսակցական փաստաթղթերի ստուգումը ցույց տվեց, որ այդ ռեսպուբլիկաները քաղաքական զգոնության և կուսակցական ղեկավարման բարձր մակարդակի ցուցանիշ չեն եղել: Ընդհակառակը, վարչարարությամբ տարվելը կուսակցական ղեկավարության թուլության և գաղափարականորեն ղեկավարելու, սխալները կանխելու, կադրերը դաստիարակելու ու կազմակերպչական քրտնաջան գործունեությամբ կուսակցության որոշումների պլանաչափ կատարմանը հասնելու անկարողության հատկանիշ է:

Դատապարտելով կադրերի դաստիարակության գործում եղած խեղաթյուրումները, Կուսվերահսկողության Հանձնաժողովի պլենումը մատնանշեց, որ երկրամասային և մարզային կենտրոններում կուսկոլեգիաներն իրենք են հաճախ ձևականորեն քննել կոմունիստների գանգատները:

Պլենումը մշակեց այն միջոցառումների ծրագիրը, որոնք կուսակցական տույժի



նոր պրակտիկա չեն հաստատում: Ամեն տեսակ թշնամական և խորթ տարրերի դեմ անողոք պայքար մղելու հետ միասին կուսակցական ղեկավարները պետք է ավելի հաճախակի դիմեն կոմունիստի կատարած սխալը համբերատար կերպով ընկերականորեն բացատրելուն, կանխեն դրա առաջացման հնարավորությունը, կազմակերպության մեջ դաստիարակեն կազմակերպության յուրաքանչյուր անդամի համար պատասխանատու լինելու զգացմունքը: Առանձին դեպքերում կուսակցական կազմակերպությունները, կուսակցությունից հեռացնելու փոխարեն, կարող են զանցառուներին թեկնածու կամ համակիրող փոխադրել կեսից մինչև մեկ տարվա ժամկետով՝ նայած կատարված սխալի բնույթին:

Կուսակցական սկզբնական կազմակերպությունները պարտավոր են ընդհանուր ժողովներում քննարկել կոմունիստների զանցանքները և ստալինաբար դաստիարակել ոչ միայն նրանց, ովքեր զանցանք են գործում, այլև ամբողջ կուսակցական մաս-

Կուսակցական փաստաթղթերի ստուգումը ցույց տվեց, որ այդ ռեսպուբլիկաներն իսկական զգոնության և կուսակցական ղեկավարման բարձր որակի ցուցանիշ չեն եղել: Ընդհակառակը, վարչարարությամբ տարվելը կուսակցական ղեկավարության թուլության և գաղափարականորեն ղեկավարելու, սխալները կանխելու, կադրերը դաստիարակելու ու կազմակերպչական քրտնաջան գործունեությամբ կուսակցության որոշումների պլանաչափ կատարմանը հասնելու անկարողության հատկանիշ է:

Դատապարտելով կադրերի դաստիարակության գործում եղած խեղաթյուրումները, Կուսվերահսկողության Հանձնաժողովի պլենումը մատնանշեց, որ երկրամասային և մարզային կենտրոններում կուսկոլեգիաներն իրենք են հաճախ ձևականորեն քննել կոմունիստների զանցանքները:

Պլենումը մշակեց այն միջոցառումների ծրագիրը, որոնք կուսակցական տույժի



նոր պրակտիկա չեն հաստատում: Ամեն տեսակ թշնամական և խորթ տարրերի դեմ անողոք պայքար մղելու հետ միասին կուսակցական ղեկավարները պետք է ավելի հաճախակի դիմեն կոմունիստի կատարած սխալը համբերատար կերպով ընկերականորեն բացատրելուն, կանխեն դրա առաջացման հնարավորությունը, կազմակերպության մեջ դաստիարակեն կազմակերպության յուրաքանչյուր անդամի համար պատասխանատու լինելու զգացմունքը: Առանձին դեպքերում կուսակցական կազմակերպությունները, կուսակցությունից հեռացնելու փոխարեն, կարող են զանցառուներին թեկնածու կամ համակիրող փոխադրել կեսից մինչև մեկ տարվա ժամկետով՝ նայած կատարված սխալի բնույթին:

Կուսակցական սկզբնական կազմակերպությունները պարտավոր են ընդհանուր ժողովներում քննարկել կոմունիստների զանցանքները և ստալինաբար դաստիարակել ոչ միայն նրանց, ովքեր զանցանք են գործում, այլև ամբողջ կուսակցական մաս-

սան: Պետք է սկզբնական կազմակերպությունների կյանքում վճռաբար բարձրացնել կուսակցական ժողովների դերն ու նշանակությունը:

Կուսվերահսկողության Հանձնաժողովի պլենումի վորոշումները կուսակցական շինարարության մասին ստալինյան ցուցումների փայլուն գործադրությունն են: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար և Կուսվերահսկողության Հանձնաժողովի նախագահ ընկ. Ն. Ի. Յեժովը պլենումում ունեցած իր ելույթներում ամենայն շիտակությամբ բացահայտեց վերահսկողության որգանների աշխատանքի թերությունները:

Կուսվերահսկողության Հանձնաժողովի վորոշումներն ապահովում են մեր կուսակցության հզորության հետագա աճումը, ուժեղացնում են նրա կազմակերպական ու գաղափարական ղեկավարությունը մեր յերկրում կոմունիզմի շինարարության նկատմամբ:



## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՅԵ ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՀԱՄԱՐ

Լենին-Ստալինի կուսակցությունը, վորն անսահման հեղինակություն է վայելում աշխատավորության միլիոնավոր մասսաների մեջ, հաստատապես ու անշեղորեն առաջ է տանում յերկիրը դեպի լիակատար սոցիալիստական հասարակության կառուցումը: Արդեն այժմ մեզ մոտ հանրային սեփականությունը հանդիսանում է սեփականության հիմնական ձևը և ամբողջ ժողովրդական տնտեսությունը սոցիալիստական է: Յեվ այդ տեսակետից մենք արդեն լուծել ենք յերկրորդ հնգամյակի գլխավոր խնդիրը—դասակարգերի վերացումը մեր յերկրում: Հենց միայն 1935 թվականին բուն ներքնախավերից վոտքի յելան և շարժման մեջ մտան սոցիալիզմի կառուցողների նոր, հզոր ջոկատներ, ծնունդ առավ ու ծավալվում է ստախանովյան շարժումը, վորը «պայմաններ է նախապատրաստում

սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար» (Ստալին)։

Սոցիալիստական սեփականության հիմքերի ամրացումը, դասակարգերի վերացումը, աշխատավոր մասսաների գիտակցության աճումը—այդ բոլորը հնարավորություն է տալիս մինչև վերջը ծավալելու խորհրդային դեմոկրատիզմը և յերկրի բոլոր աշխատավորներին դարձնելու մեր մեծ հայրենիքի շինարարության ու ամրացման ակտիվ մասնակիցներ։ Արդեն այս տարի ընդունվելու յե նոր սահմանադրությունը, վորի վրա աշխատում է մի հանձնաժողով՝ ընկեր Ստալինի անձնական ղեկավարությամբ։ Հենց միայն այդ փաստը վկայում է, վոր մեր կուսակցությունը հարազատորեն, կենդանի ու ամենասերտ կերպով կապված է Խորհրդային Միության ժողովուրդների հետ։

Սոցիալիստական շինարարության մեծագույն հեռանկարները և նոր վիթխարի խնդիրներն ավելի բարձր պահանջներ են ներկայացնում մեր կուսակցությանը, վորը



հանդիսանում է պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը։ Ընկեր Ստալինը մի անգամ չէ ընդգծել, վոր բոլշևիկներին հատուկ պետք է լինի բացառիկ սառնարյունություն, զգաստություն և համեստություն իրենց սեփական հաջողությունները գնահատելիս։ Բոլշևիկին զարդարող այդ հատկությունները հատուկ նշանակություն են ստանում այժմ, ներկա պայմաններում, յերբ ծավալվում է խորհրդային դեմոկրատիզմը և մեծանում է կուսակցության դերը և կոմունիստների պատասխանատվությունը մեր յերկրի ճակատագրի համար։

Այդ բոլորն իր հերթին պահանջում է ամենաարագ կերպով ամրացնել կուսակցական փաստաթղթերի ստուգման արդյունքները, վճռաբար բարձրացնել ամբողջ կուսակցական աշխատանքը և նախ և առաջ է՛լ ավելի զարգացնել ներկուսակցական դեմոկրատիան, ուժեղացնել հեղափոխական զգաստությունը և պահպանել կուսակցական ու պետական ամենախիստ կարգապահու-

թյուն յուրաքանչյուր կոմունիստի նկատմամբ։

Այդ տեսակետից հսկայական իմաստ են ստանում Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի պլենումի յերեկ «Պրավդա»-յում հրապարակված և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից հաստատված վորոշումները «Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաների աշխատանքի և ՀամԿ(բ)Կ անդամներին ու թեկնածուներին կուստույժի յենթարկելու կարգի մասին»։

Վո՞րն է այդ վորոշումների հիմնական իմաստը։ Այն, վոր նրանք բոլշևիկյան ամբողջ շիտակությամբ բացահայտում են շատ կազմակերպությունների կուսակցական աշխատանքի խոշորագույն թերությունները, վորոնց պատճառով մոռացության են մատնվել կուսակցության կանոնադրության հիմնական դրույթները, մանավանդ խախտվել է ներկուսակցական դեմոկրատիան, թուլացել է դասակարգային զգաստությունն ու կուսակցական կարգապահությունը։



Այն, վոր նրանք կարևորագույն փաստաթուղթ են, վորոնք ցույց են տալիս ներկուսակցական աշխատանքն արմատապես բարելավելու ուղիներն ու միջոցները, բարձրացնում են կուսակցական սկզբնական կազմակերպությունների նշանակությունը և յուրաքանչյուր կոմունիստի պատասխանատվության զգացումը։ Վերջապես, նրանք դարձյալ հիշեցնում են, վոր կուսակցական աշխատանքի հիմնական մեթոդն է յեղել և է՝—համոզելու մեթոդը։

Այդ բոլոր ցուցումները վերին աստիճանի կարևոր նշանակություն են ստանում այն պատճառով, վոր չնայած Սարատովի Յերկրկոմի ամենակոպիտ քաղաքական սխալներին, վորոնք նշվեցին Կենտրոնական Կոմիտեյի անցյալ տարվա հունիսի հատուկ վորոշմամբ,—կուսակցական շատ կազմակերպություններում շարունակվում եյին բացարձակ վարչարարության ու մասսայական ռեպրեսիաների պրակտիկան և ներկուսակցական դեմոկրատիայի խախտումները։

Բոլշևիզմի վաղուց խորթ, միանգամայն վնասակար այդ պրակտիկայի հետևանքն եր լինում այն, վոր հաճախ կուսակցական տույժերը կուսակցական ու պետական կարգապահությունն ամրացնելու միջոցներից դառնում եյին ձևական, բյուրոկրատիկ միջոց:

Ապա հաճախ այդպիսի պրակտիկայի հետևանքն եր լինում այն, վոր կուսակցության շարքերում չմերկացված եյին մնում կուսակցության շարքերը սողոսկած քայքայված ու թշնամի մարդիկ և միևնույն ժամանակ կուսակցական շատ կազմակերպություններ շարունակում եյին առանց այլևայլության, մասսայաբար տույժի յենթարկել կուսակցության անդամներին ամեն մի չնչին առիթով, վորը յերբեմն վոչ մի առնչություն չուներ կուսակցական կարգապահության խախտման հետ:

Վերջապես, այդ վնասակար պրակտիկայի հետևանքն եր լինում այն, վոր կոմունիստների գանգատները քննվում եյին առավելապես կուսակցական կոմիտեների



նեղ նիստերում և դրանով իսկ նսեմանում եր տույժերի դաստիարակչական նշանակությունը և վերանում եր սկզբնական կուսակցական կազմակերպությունների պատասխանատվությունն իրենց կուսանդամների ու թեկնածուների վարքագծի համար:

Ավելորդ է ասել, վոր այդպիսի պրակտիկան ուղղակի անհանդուրժելի յե ներկա պայմաններում, յերբ վճռաբար հարց ե դրվում ներկուսակցական աշխատանքը բարձրացնելու մասին, յուրաքանչյուր կոմունիստի դերն ու ակտիվությունն ուժեղացնելու մասին, մարդկանց հանդեպ ուշադիր լինելու մասին:

Կուսակցական տույժերը կոմունիստներին բոլշևիկյան վոգով դաստիարակելու հզոր միջոց են: Սակայն նրանք այդպիսի միջոց կարող են լինել միայն այն դեպքում, յեթե յուրաքանչյուր գանգատը քննվի վոչ թե մարդկանց նեղ շրջանում, այլ կոլեկտիվում՝ կուսակցական ժողովում, յեթե այդ գանգատի գնահատմանը մասնակցի ամբողջ սկզբնական կուսկազմակերպու-

թյունը և ընդունված վորոշման համար պատասխանատու լինեն բոլոր կոմունիստները:

Վտարելը կուսակցությունից, հանդիմանության վորոշում ընդունելը—հեշտ գործ ե, այստեղ քիչ բան ե պահանջվում կուսակցական ղեկավարից: Սակայն սխալ գործած կոմունիստին դաստիարակելու, նրան սովորեցնելու, համոզելու համար, վոր տվյալ զանցանքի որինակով ավելանա բոլոր կոմունիստների պատասխանատվությունը,—անհրաժեշտ ե մեծ ու փութաջան աշխատանք: Պետք ե հաստատակամ ու անողոք լինել կուսակցության բոլոր թշնամիների հանդեպ, յերկերեսանի, կարգապահությունը չարանենգորեն խախտող մարդկանց հանդեպ, սակայն պետք ե և մեծագույն ուշադրություն ու հոգատարություն ցուցաբերել այն կոմունիստների նկատմամբ, վորոնք նվիրված լինելով հանդերձ կուսակցությանը, այս կամ այն սխալն են գործել: Այն կոմունիստների նկատմամբ, վորոնք զանցանք են գործել



պատահաբար, կամ, որինակ, քաղաքական տհասության պատճառով՝ կարելի յե գործադրել «կուսակցության անդամներին կուսակցական դաստիարակություն տալու և նրանց մեջ կարգապահությունն ամրացնելու այնպիսի միջոցներ, ինչպիսիք են կուսակցության անդամի գործած սխալը համբերատար կերպով ընկերաբար բացատրելը, նրան նախազգուշացնելը, նրան հասարակական կշտամբանքի յենթարկելը և այլն» (Կուսակցական վերահսկողության Հանձնաժողովի բանաձևից):

Այստեղից միանգամայն հասկանալի յե դառնում, թե ինչ վիթխարի չափով աճում ե կուսակցական սկզբնական կազմակերպությունների և նրանց ընդհանուր ժողովների դերը:

Պետք ե հիշել, վոր մեր կուսակցության հիմքն են կազմում կուսակցական սկզբնական կազմակերպությունները և վոր կուսակցական աշխատանքի կենտրոնը պետք ե կազմի կոմունիստը: Պայքար մղելով կու-

սակցության գծի ու լոզունգների համար, յուրաքանչյուր ղեկավար բոլոր դեպքերում նախ և առաջ պետք է հանդես գա վորպես մարդկանց, կոմունիստների կազմակերպիչ: Ճանաչել մարդկանց, նշանակում է գիտենալ նրանց աշխատանքը նրա բոլոր հակասություններով ու դժվարություններով, հիվանդությունները տեսնել սաղմում և կանխել դրանք:

Մեր յերկիրը վճռաբար հաղթահարելով կապիտալիզմի մնացուկներն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, մեր յերկիրը, վոր մարդուն—սոցիալիզմի այդ ամենաարժեքավոր կապիտալին—հասցրել է անհասանելի բարձրության, ընդառաջ է գնում նոր սահմանադրությանը, վորը մինչև վերջը կծավալի խորհրդային դեմոկրատիզմը: Այդ պարտավորեցնում է կուսակցությանը՝ կատարելագործել ամենալայն մասսաներին և նախ և առաջ կոմունիստներին կազմակերպելու և դաստիարակելու բոլոր գործիքները:

Լենինի և Ստալինի սնուցած բոլշևիկյան



կուսակցությունը հանդիսանում է մարդկության ամենաբարձր իդեալների արտահայտիչը: Նա գլխավորում է սոցիալիզմ կառուցող միլիոնավորների հաղթական յերթը: Նա անողոք է բոլոր թշնամիների հանդեպ, դեպի այն ամենը, ինչ խանգարում և կասեցնում է պատմական մեծ խնդիրների ամենաարագ թափով իրականացնելը: Միևնույն ժամանակ նա համառորեն ու համբերությամբ աճեցնում, դաստիարակում ու ձևավորում է փորձված և ստուգված բոլշևիկյան կադրերին, վորոնց դերն ու նշանակությունն որեցոր մեծանում է:

ՀՍՍՀ-ССР

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ինֆորմացիոն հաղորդագրություն . . . . 5

Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի լիազորների աշխատանքի մասին։ Համ. Կ(բ)Կ ԿԿ կից Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի III պլենումի վորոշումը . . . . . . . . . . . . . . . 9

Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի կուսկոլեգիաների աշխատանքի և Համ Կ(բ)Կ անդամներին ու թեկնածուներին կուսակցական տույժերի յենթարկելու կարգի մասին։ Համ Կ(բ)Կ ԿԿ կից Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի III պլենումի վորոշումը . . . . . . . . . . . 29

Համ Կ(բ)Կ անդամներին ու թեկնածուներին կուսակցական տույժի յենթարկելու կարգի մասին . . . . . . . . . . . 41

Կուսկոլեգիաների աշխատանքի մասին . . 50

Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի պլենումի արդյունքները . . . . . . . . 65

Կուսկազմակերպությունը պատասխանատու յե կոմունիստի վարքագծի համար . . . . . . 75

Պատ. խմբ. Հ. Գասպարյան, թարգմ. Հ. Թուրշյան,
տեխն. խմբ. Ս. Խաչատրյան, սրբ. Ա. Տ.-Մկրտչյան

Գլավլիտի լիազոր № 1064, հրատ. № 368,
պատվեր № 124, տիրաժ 5000, ինդեքս II—84/PK

Հանձնված է արտադրության 31/III 1936 թ.
Ստորագրված է տպագրության 4/IV 1936 թ.

ԳԻՆԸ 60 Կ.

Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալլավերդյան № 27

ՀՀ Ազգային գրադարան
NL0186598

Գ ի ն ը 60 կ.

ПОСТАНОВЛЕНИЯ *III* ПЛЕНУМА
КОМИССИИ ПАРТИЙНОГО КОНТРОЛЯ
ПРИ ЦК ВКП (б)

Армпартиздат, Эривань